ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար արտահագուստի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/32-3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/32-3 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի և «ՌԱՍՍԻ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվել է ապրանքի ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի հունվարի 30-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2023 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/32-3 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ**